

Հավելված  
Հայաստանի Հանրապետության հանրային  
ծառայությունները կարգավորող հանձնաժողովի  
2021 թվականի ապրիլի 7-ի N<sup>0</sup>115Ա որոշման

«Հավելված  
Հաստատված է Հայաստանի Հանրապետության հանրային  
ծառայությունները կարգավորող հանձնաժողովի  
2011 թվականի ապրիլի 13-ի N<sup>0</sup>171Ա որոշմամբ

**«Արմենիա» Միջազգային Օդանավակայաններ» փակ  
բաժնետիրական ընկերության կողմից Շիրակի մարզի Գյումրի  
քաղաքում շարժական ռադիոկապի ցանցերի կազմակերպման  
համար 163,825ՄՀց և 164,175ՄՀց ռադիոհաճախականությունների  
օգտագործման թույլտվության**

## **Պայմանները**

**(Թույլտվություն N<sup>0</sup>929, տրված Հայաստանի Հանրապետության  
հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի  
2011 թվականի ապրիլի 13-ի N<sup>0</sup>171Ա որոշմամբ)**

### **1. Սահմանումներ**

1. Սույն թույլտվությունում օգտագործված հիմնական հասկացությունները սահմանվում են հետևյալ կերպ.
  - 1) Հանձնաժողով՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով.
  - 2) Թույլտվություն ունեցող անձ կամ Կարգավորվող անձ՝ «Արմենիա» Միջազգային Օդանավակայաններ» փակ բաժնետիրական ընկերություն.
  - 3) Թույլտվություն՝ Հանձնաժողովի կողմից Կարգավորվող անձին տրված սույն փաստաթուղթը, որը հավաստում է ռադիոհաճախականություն օգտագործելու նրա իրավունքը և պարտականությունը.
  - 4) Ֆորս մաժոր՝ արտակարգ և անկանխելի դեպքեր և հանգամանքներ, որոնք ստեղծվել են Կարգավորվող անձի կամքից անկախ, ներառյալ (սակայն չսահմանափակվելով դրանցով) բնական աղետները, բնության ուժերի արտասովոր ուժեղ դրսևորումները, ինչպես, օրինակ, ջրհեղեղները,

երկրաչափերը, փոթորիկները, պտտահողմերը, նաև սաբոտաժային գործողություններ, ահաբեկչություններ, պատերազմներ, ապստամբություններ, հասարակական անկարգություններ, գործադուլներ, որոնք խոչընդոտում են Կարգավորվող անձի գործունեությունը կամ հանգեցնում նրա ստանձնած ցանկացած պարտավորության կատարման ձգձգման կամ դադարեցման՝ հակառակ նրա կողմից գործադրված ջանքերի՝ խուսափելու, թուլացնելու կամ վերացնելու այդ ուժերի ազդեցությունը:

## 2. Թույլտվության գործողության ժամկետը

2. Թույլտվությունը ուժի մեջ է մտնում 2011 թվականի ապրիլի 13-ից:
3. Թույլտվությունը գործում է մինչև 2031 թվականի ապրիլի 13-ը:

## 3. Ռադիոհաճախականության օգտագործման էությունը կազմող գործառույթները

4. Թույլտվությունն ուժի մեջ մտնելու պահից Կարգավորվող անձին իրավունք է տրվում և պարտավորեցվում է Շիրակի մարզի Գյումրի քաղաքում ներարտադրական նպատակով շարժական ռադիոկապի ցանցի շահագործմամբ օգտագործել 163,825ՄՀց և 164,175ՄՀց ռադիոհաճախականությունները՝ հետևյալ տեխնիկական ցուցանիշներով՝

- 1) բազային ռադիոկայանների տեղադրման վայրը, աշխարհագրական կոորդինատները և հատկացված ռադիոհաճախականությունները՝

Ռադիոկայանների տեղադրման վայրը	Աշխարհագրական կոորդինատները	Հատկացված ռադիոհաճախականությունը (ՄՀց)
<b>Անվտանգության ծառայություն</b>		
Շիրակի մարզ, ք.Գյումրի, «Շիրակ» օդանավակայան	43E 51' 00 " 40N 46' 00 "	164,175
<b>Շահագործման ծառայություն</b>		
Շիրակի մարզ, ք.Գյումրի, «Շիրակ» օդանավակայան	43E 51' 00 " 40N 46' 00 "	163,825

- 2) ընդգրկման գոտին՝ Շիրակի մարզ, ք. Գյումրի, «Շիրակ» օդանավակայան.
- 3) ռադիոկայանների հզորությունը՝ 5Վտ.
- 4) ճառագայթման դասը՝ 16K0F3E.
- 5) անտենաների տեսակը՝ ներկառուցված.
- 6) անտենաների ճառագայթման ազիմուտը՝ 360 աստիճան:

5. Կարգավորվող անձը պարտավոր է շարժական ռադիոկապի ցանցերը շահագործել միայն ներարտադրական նպատակների համար:
6. Կարգավորվող անձն իրավունք չունի իր ներարտադրական ցանցը փոխկապակցել հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցին:
7. Կարգավորվող անձն իրավունք չունի ներարտադրական ցանցի միջոցով մատուցել հատուցելի կամ անհատույց էլեկտրոնային հաղորդակցության ծառայություններ:
8. Կարգավորվող անձը պարտավոր է ռադիոհաճախականություններն օգտագործել այնպես, որ վնասակար ազդեցություն չունենա այլ անձանց ռադիոհաճախականության օրինական օգտագործման վրա:
9. Թույլտվության պայմանների 8-րդ կետի խախտման դեպքում Հանձնաժողովը կարող է փոփոխություն կատարել թույլտվության մեջ:

#### **4. Կարգավորվող անձի գործունեությունը**

10. Կարգավորվող անձը պարտավոր է իր գործունեությունը իրականացնել «էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի, Հանձնաժողովի ընդունած իրավական ակտերի, Թույլտվության պայմանների և այլ իրավական ակտերի համաձայն:
11. Թույլտվությունը չի կարող օգտագործման տրվել այլ անձանց, օտարվել կամ գրավադրվել՝ բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:
12. Կարգավորվող անձը պարտավոր է Թույլտվության պայմանների 4-րդ կետում նշված որևէ տեխնիկական ցուցանիշի իր նախաձեռնությամբ փոփոխության դեպքում եռամսյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել կապի գծով քաղաքաշինության փաստաթղթերի մշակման լիցենզիա ունեցող անձանց

կողմից մշակված շարժական ռադիոկապի ցանցի տեխնիկական նախագիծը՝ երկու օրինակից:

13. Կարգավորվող անձը պարտավոր է շարժական ռադիոկապի ցանցերի շահագործումից առնվազն 3 օր առաջ տեղեկացնել Հանձնաժողովին շահագործման մասին:
14. Կարգավորվող անձի բաժնեմասի նկատմամբ սեփականության իրավունքն այլ անձի փոխանցելուց 15 աշխատանքային օր առաջ Կարգավորվող անձը պարտավոր է դրա մասին գրավոր տեղեկացնել Հանձնաժողովին:
15. Կարգավորվող անձը պարտավոր է ապահովել Թույլտվությամբ հատկացված ռադիոհաճախականությունների արդյունավետ օգտագործումը:
16. Կարգավորվող անձը պարտավոր է Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով և ժամկետներում վճարել ռադիոհաճախականության օգտագործման վճարները եռամսյակը մեկ անգամ՝ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը:
17. Կարգավորվող անձը պարտավոր է իր վերակազմակերպման կամ անվանափոխման, կամ գտնվելու վայրի փոփոխման դեպքում այդ փոփոխությունների իրավական ուժ ստանալու օրվանից սկսած 15-օրյա ժամկետում այդ մասին տեղեկացնել Հանձնաժողովին՝ կցելով նշված տեղեկությունները հավաստող համապատասխան փաստաթղթերը:
18. Կարգավորվող անձը՝ Հանձնաժողովի կողմից սահմանված կարգին և ձևերին համապատասխան, պարտավոր է իր գործունեության մասին տեղեկատվություն ներկայացնել Հանձնաժողով:
19. Կարգավորվող անձը պատասխանատվություն է կրում իր գործունեության մասին Հանձնաժողով ներկայացրած տեղեկատվության հավաստիության համար:
20. Կարգավորվող անձի՝ Հանձնաժողով ներկայացրած տեղեկատվությունը հրապարակային է, եթե այն Կարգավորվող անձի կողմից չի համարվում գաղտնի և նշված չէ որպես «գաղտնապահական տեղեկատվություն»: Կարգավորվող անձն իրավունք ունի ներկայացնել փաստարկներ և հիմնավորումներ՝ ապացուցելու համար, որ իր ներկայացրած տվյալների (ներառյալ՝ «գաղտնապահական տեղեկատվությունը») հրապարակումը կարող

է վնասել իր գործունեության շահերին: Հանձնաժողովն իրավասու է ընդունել կամ մերժել նման տեղեկատվության չիրապարակման վերաբերյալ Կարգավորվող անձի խնդրանքը:

21. Կարգավորվող անձը պարտավոր է հնարավորինս սեղմ ժամկետում Հանձնաժողով հայտնել այն հանգամանքների մասին, որոնք հանգեցրել կամ կարող են հանգեցնել Թույլտվության պայմանների խախտման:

#### **5. Գործունեության վերահսկում**

22. Թույլտվության պայմանների կատարման կամ պահպանման վերահսկումն իրականացնում է Հանձնաժողովը:
23. Թույլտվության պայմանների կատարման կամ պահպանման վերահսկումն ապահովելու նպատակով Հանձնաժողովի ներկայացուցիչներն իրավունք ունեն անարգել մուտք գործել Կարգավորվող անձի տարածք: Վերահսկումն իրականացնելու ընթացքում Կարգավորվող անձը պարտավոր է աջակցել Հանձնաժողովին:
24. Հանձնաժողովն անհրաժեշտության դեպքում, իր կողմից սահմանված կարգով և ժամկետներում, իրավունք ունի իրականացնելու Թույլտվության պայմանների պահպանման ուսումնասիրություն և Հանձնաժողով ներկայացված տեղեկատվության հավաստիության ստուգում:

#### **6. Պատժամիջոցներ**

25. Կարգավորվող անձի կողմից «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի, Հանձնաժողովի ընդունած իրավական ակտերի պահանջները կամ Թույլտվության պայմանները չկատարելու, ոչ պատշաճ կատարելու կամ խախտելու դեպքում Հանձնաժողովն իրավասու է կիրառել հետևյալ պատժամիջոցները՝
  - 1) տույժերի և տուգանքների կիրառում,
  - 2) Թույլտվության փոփոխում,
  - 3) Թույլտվության կասեցում,
  - 4) Թույլտվության գործողության դադարեցում:

26. Կարգավորվող անձը Թույլտվության 25-րդ կետի համաձայն չի ենթարկվում պատասխանատվության, եթե արձանագրված խախտումները Ֆորս մատրիի հետևանք են:

### **7. Թույլտվության փոփոխություն, ժամկետի երկարաձգում, Թույլտվության կորստի դեպքում կրկնօրինակի տրամադրում**

27. Շարժական ռադիոկապի ցանցերի բազային կայանների տեղադրման և շահագործման ընթացքում տեխնիկական ցուցանիշների ցանկացած փոփոխության դեպքում Կարգավորվող անձը անհապաղ դիմում է Հանձնաժողով՝ Թույլտվության մեջ փոփոխություններ կատարելու կամ նոր Թույլտվություն ստանալու հայտով:

28. Թույլտվության պայմաններում փոփոխություններ կարող են կատարվել Հանձնաժողովի կամ Կարգավորվող անձի նախաձեռնությամբ՝ Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով:

29. Թույլտվության կորստի (կորցնելու, ոչնչանալու և այլն) կամ գործողության ժամկետի երկարաձգման անհրաժեշտության դեպքում Կարգավորվող անձը պարտավոր է հայտ ներկայացնել Հանձնաժողով՝ վերջինիս կողմից սահմանված կարգով:

### **8. Այլ պայմաններ**

30. Թույլտվության գործողությունը կարող է կասեցվել կամ դադարեցվել Կարգավորվող անձի կամ Հանձնաժողովի նախաձեռնությամբ՝ օրենսդրությամբ սահմանված կարգով:

### **9. Ծանուցում**

31. Սույն Թույլտվության պայմաններով նախատեսված իրազեկումը, այդ թվում փաստաթղթերի հանձնումը, կատարվում է օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:»: